ՆԿԱՐԱԳԻՐ

առաջարկվող ապրանքի ամբողջական

ԴԱՆԻԵԼՅԱՆ ԳՐՈՒՊՊ ՍՊԸ-ն ՀՀԱՆՇՕՓ-ԷԱՃԱՊՁԲ-2026/28 ծածկագրով կազմակերպված էլեկտրոնային աճուրդին մասնակցելու շրջանակում ներկայացնում է իր կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը

Չափաբաժնի համար	Առաջարկվող ապրանքի	
	արտադրողի անվանումը	տեխնիկական բնութագիրը
7	Գոֆորմ Վանլի	Ձմեռային օդաճնշական անվադողերը նախատեսված են ավտոմեքենաների անվտանգ շահագործման համար ձմեռային եղանակային պայմաններում (ցածր ջերմաստիճան, ձյուն, սառույց, թաց և սառած ճանապարհածածկ)։Անվադողը պետք է ունենա վավեր համապատասխանության սերտիֆիկատ, որը հաստատում է դրա համապատասխանությունը գործող նորմատիվ պահանջներին։ Անվադողը պետք է լիովին համապատասխանի ՀՀ կառավարության 2004 թվականի նոյեմբերի 11-ի N 1558 որոշմամբ հաստատված «Օդաճնշական անվադողերի տեխնիկական կանոնակարգի» պահանջներին։ Արտադրության տարեթիվը- 2025-2026 թ. : Չօգտագործված ։ Անվադողը պետք է լինի նոր, չօգտագործված, առանց որևէ վերանորոգման, վերամշակման կամ մեխանիկական վնասվածքների հետքերի։Ձմեռային անվադողը պետք է ունենա ձմեռային շահագործման համար նախատեսված հատուկ ռելիեֆային նախշ (պրոտեկտոր), որը ապահովում է բարձր կպչողականություն ձյան, սառույցի և թաց ճանապարհածածկի վրա։ Ռետինային խառնուրդը պետք է ապահովի էլաստիկություն ցածր ջերմաստիճաններում, պահպանելով անվադողի շահագործման արդյունավետությունը։Անվադողի շերտային կառուցվածքը պետք է ապահովի բարձր դիմացկունություն, մաշակայունություն և ծանրաբեռնվածության նկատմամբ

		կայունություն, ինչպես նաև անվտանգ երթևեկություն: Անվադողը պետք է ապահովի կայունություն, լավ կառավարելիություն և կարճ արգելակման ճանապարհ ինչպես չոր, այնպես էլ թաց և սառցակալած ճանապարհային պայմաններում: Շահագործման ընթացքում՝ գործարանային թերություն ի հայտ գալու դեպքում, անվադողը ենթակա է փոխարինման նորով՝ մատակարարի հետ համապատասխան զննությունից հետո: Բեռանաթափում և տեղափոխում պահեստ Մատակարարը պարտավորվում է ապրանքի մատակարարումն իրականացնել Պատվիրատուի կողմից նշված հասցեով և սեփական ուժերով ու միջոցներով ապահովել ապրանքի բեռանաթափումը, տեղափոխումը և տեղաբաշխումը (դասավորումը) Պատվիրատուի կողմից սահմանված համապատասխան պահեստում/պահեստային տարածքում: Ապրանքի հանձնումը չի համարվում կատարված միայն մուտքի մոտ կամ բակի տարածքում բեռնաթափելու դեպքում. ապրանքը պետք է հանձնվի պահեստում՝ ամբողջ ծավալով, առանց լրացուցիչ ծախսերի Պատվիրատուի համար:

ПОЛНОЕ ОПИСАНИЕ

предлагаемого товара

ООО *ДАНИЕЛЯН ГРУПП* в качестве участника в рамках участия в электронном аукционе под кодом ՀՀԱՆՇՕՑ-ԷԱՃԱՊՁԲ-2026/28 ниже представляет полное описание предлагаемого им товара.

Номер лота	Предлагаемый товар	
	наименование производителя	технические характеристики
7		